ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

1(9)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

№ 1(9)

ԵՐԵՎԱՆ 2022

Տպագրվում է Հայաստանի պատմության թանգարանի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակվում է 1948 թվականից

Խմբագրական խորհուրդ՝

Նժդեհ Երանյան. *պ. գ. թ. – նախագահ*
Հայկ Նազարյան, *պ. գ. թ. – պատասխանատու քարտուղար*
Պավել Ավետիսյան, *պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*
Հարություն Մարության, *պ. գ. դ.*
Համլետ Պետրոսյան, *պ. գ. դ., պրոֆեսոր*
Հռիփսիմե Պիկիչյան, *պ. գ. թ., դոցենտ*
Ռուբեն Վարդանյան, *պ. գ. թ.*
Մխիթար Գաբրիելյան, *պ. գ. թ., դոցենտ*
Արսեն Բոբոխյան, *պ. գ. թ.*
Տորք Դալալյան, *բ. գ. թ.*
Համո Սուքիասյան, *պ. գ. թ., դոցենտ*
Արա Սանճեան, *PhD* (*ԱՄՆ*)
Ռոբերտո Դան, *PhD* (*Իտալիա*)
Հրաչ Չիլինկիրեան, *PhD* (*Մեծ Բրիտանիա*)

ISSN 1829-0361

© Հայաստանի պատմության թանգարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արփակ Ասապրյան

ԿԱՐԻՆՈՒՄ 1785 ԹՎԱԿԱՆԻՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ ՊԱՀՎՈՂ №3579 ՄԻՆԻՆ 8

Լիլիա Ավանեսյան

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՔՆԱԴԱՐՅԱՆ ԱՆԿՎԱԾԻ ԵՎ ԳՈՐԳԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ԸՍՏ ՀՊԹ ՆՅՈՒԹԵՐԻ) 21

Հրազդան Թոքմաջյան

ՄԱԼԱԹԻԱՅԻ ՀՅՈՒՍՎԱԾ ԿԱՐ 38

Հասմիկ Պետրոսյան

ԳՈՒԳԱՐՔԻ ՏՆԱՅՆԱԳՈՐԾ ԲՈՒՍԱՆԱԽՇ ԳՈՐԳԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԸՍՏ ՀՊԹ, ՀԱԹ, ԼՓԵԹ, ԵՔՊԹ ՆՅՈՒԹԵՐԻ) 46

ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Ասպղիկ Իսրայելյան

ԱՉՔԻ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐՈՒՄ ԵՎ ՈՉ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ 56

Արևիկ Մելիքյան

ՊԱՏՈՒՄՆԵՐ 1918 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ 82

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Նելլի Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԲԱՑԻԿ-ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ 94

Արմինե Շահբազյան

«ԴԱՎԻԹ ԲԵԿ» ԿԵՐՊԱՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՅՆԱՑՈՒՄԸ 103

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հայկ Նազարյան

1826 – 1828 ԹԹ. ՌՈՒՍ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԱՄՆԱԿՑԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԶՈՐԱՅԻՆ ԴՐՈՒԺԻՆԱՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱԿԱԶՄԸ, ԹՎԱԿԱԶՄԸ, ՀԱՄԱԶԳԵՍՏԸ, ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐՏԱԿԱՆ ԴՐՈՇՆԵՐԸ 114

Վանիկ Վիրաբյան

ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ 1919 Թ. ԶՈՂ-ԲԱՍԱՐԳԵՉԱՐՅԱՆ ԽՌՈՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԳՆԴԱՊԵՏ ՔԼԱՅՎ ԹԵՄՊԵՐԼԻԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 124

ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

Լիլիա Ավանեսյան

ՆԱԶԻԿ ԱՎԱԳՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ 149

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ 153

Արմինե Շահբազյան
Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր
Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան
shahbazyan9494@gmail.com

«ԴԱՎԻԹ ԲԵԿ» ԿԵՐՊԱՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՅՆԱՑՈՒՄԸ*

Հիմնաբառեր: Դավիթ Բեկ, Կապան, հուշարձան, անվանակոչում, որոշում, արձանագրություն, Երևանի քաղաքապետարան:

18-րդ դարի 20-ական թվականներին տաղանդավոր զորավար, խոշորագույն դիվանագետ ու գործիչ Դավիթ Բեկի գլխավորությամբ պարսկական և թուրքական բռնապետությունների դեմ Սյունիքում ծավալված ազատագրական պայքարի արդյունքում ստեղծվեց հայկական կիսաանկախ իշխանություն (Կնյազյան 1963, 3): Դա հայ ժողովրդի պատմության նշանավոր էջերից է, սակայն պետք է նշել, որ մեր պատմության մեջ ոչ մի զորավարի կյանքը, ծագումնաբանությունը և գործունեությունն այնքան աղքատիկ չէ հավաստի աղբյուրներից, ինչպես Դավիթ Բեկինը (Օրբելյան 1971, 178):

Նրա պատմությունը գրված է Սյունիքի ազատագրական շարժման նշանավոր մասնակից զորավար Ստեփանոս Շահումյանի[1] պատմած հուշերի հիման վրա (Հովհաննիսյան 1970, 96): Եղել է ժամանակ, երբ բնագիրը համարվել էր կորած, բայց հետո Վենետիկում հանդես եկան այդ աշխատության երկու ձեռագրերը. առաջինը «Պատմություն Ղափանցոց ի գրածոց Հօրն Ղուկասոս Սեբաս» վերնագրով և երկրորդը անհեղինակ՝ նույն վերնագրով, որի ընդօրինակությունն 1871թ. Էջմիածնում արել էր Ա. Գուլամիրեանցը «Ընտիր պատմութիւն Դաւիթ Բէգին» վերնագրով (Օրբելյան 1971, 173):

Դավիթ Բեկի ծագումնաբանության հետ կապված Վենետիկյան առաջին ձեռագրում տեսնում ենք հետևյալը. «Դաւութ պեկն որ ի զայգեն հայոց» ուրիշ ոչինչ, երկրորդ ձեռագրում ՝ «Դաւիթ պէկն մծխիթացի է հայկազեանս տոհմե» (Օրբելյան 1971, 174):

---

* Ստացվել է 28.04.2022թ., ուղարկվել է գրախոսման 04.05.2022թ., ընդունվել է տպագրության 05.08.2022թ.:

1 Վենետիկում Ստեփանոս Շահումյանին կոչել են Զաքար: Զորավար Ստեփանոսը Վարդաննեսի որդին էր, Սահակի թոռը: Ծնվել է Ղափանի Եկտաստան ավանում (այժմ Մեղրու շրջանի Թխկուտ գյուղ): Ամուսնացել է Մարիամ-Վարվառե Ռոզալպայի հետ 1746թ.: Ունեցել է երեք զավակ՝ Հովհան և Մարթա, երրորդի անունը հայտնի չէ (Տես Օրբելյան 1971, 178):

Ղափանի[2] հին տոհմերից Մելիք-Փարսադանյանները և Օրբելյանները վիճել են Դավիթ Բեկին ազգակից լինելու պատվի համար, բայց «Ընտիր պատմութիւան» էջերում կասկածի առիթ է դառնում և՛ տոհմերի հավակնությունը, և՛ նրա սյունեցիությունը, որ հայտնի է գրքի տպագրից: Այնտեղ հավաստիացնում էր, թե Դավիթ Բեկը հրաման էր ստացել «երթալ յիւր հայրենի աշխարհն Սիւնեաց, որ այժմ կոչի Խափան, զորաժողով լինե անդ և պահել զերկիրն հայոց»: Սակայն այդ տարբերակը չենք գտնում «Ընտիր պատմութիւան» ձեռագիր օրինակներում (Հովհաննիսյան 1970, 101):

Ինչ վերաբերում է Դավիթ Բեկի «մցխեթեցիության» տարբերակին, ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը գրել է, որ այն չի համապատասխանում «Ընտիր պատմութեան» տպագրին, և դրանով չի բացառվում, որ Դավիթ Բեկը, իրոք, ազգակցական կապ ունեցած լիներ Ղափանի տոհմերից որևէ մեկի հետ (Հովհաննիսյան1970, 102): Հայտնի է նաև 18-րդ դարում մցխեթացի անունը հաճախ էր գործածվում «թիֆլիսեցի» իմաստով (Օրբելյան 1971, 174):

Դավիթ Բեկի ազատագրական պայքարին անդրադարձած հեղինակներից Ա. Միրզոյանի աշխատության մեջ տեսնում ենք հետևյալը. «Դավիթ-Բեկը Ղափանի ամենանշանավոր տոհմերից մեկի՝ Մելիք Փարսադանյանների ժառանգներից է, Հալիձորի մելիք Փարսադան Բ-ի եղբոր՝ Աստվածատուր իշխանի որդին: Այնուհետև Դավիթ-Բեկն իր հոր մահից հետո մնում է Մելիք Փարսադանի անմիջական խնամակալության տակ, ընտանեկան խռովությունների պատճառով հեռանում է Վրաստան և այնտեղ ծառայության մտնում վրաց թագավորի մոտ» (Միրզոյան 1950, 148):

Պատմիչ Մ. Չամչյանն, օգտագործելով վենետիկյան երկրորդ ձեռագիրը, որտեղ զորավարը անվանվել է «մծխեթացի», ինքը հավաստի աղբյուր ունենալով գրել է. «Զդաւիթ՝ որ էր 'ի ցեղէ սիւնեաց Հայկազանց՝ այր հզօր և քաջաբազուկ» (Չամչյանց 1984, 785): Պատմաբան Ա. Աբրահամյանի ուսումնասիրության մեջ տեսնում ենք տեղեկություն Դավիթ Բեկի ծննդավայրի մասին, որ Դավիթ Բեկը Ղափանցի չէ, այլ Գեղարքունիքի Ծմակ կոչվող գավառից (Աբրահամյան 1953, 92):

Այսպիսով, տեսնում ենք վարկածներ Դավիթ Բեկի ծագումնաբանության վերաբերյալ, որոնք հակասական են, բայց միևնույն ժամանակ գալիս ենք այն եզրակացությանը, որ Դավիթ Բեկն իր արմատներով եղել է սյունեցի, և որ երկար ժամանակ ապրելով Վրաստանում՝ այնուամենայնիվ չի մոռացել իր հայրենիքը: Նաև պատահական չէ, որ վրաց թագավոր Վախթանգ 6-րդը, Ստեփանոս Շահումյանի խնդրանքով, հենց Դավիթ Բեկին է ուղարկել Սյունիք՝ ազատագրական պայքարը ղեկավարելու, քանի որ հաշվի է առել նրա սյունեցի լինելու հանգամանքը:

---

[2] Կապանի (Ղափան) մասին առաջին հիշատակությունը վերաբերում է 5-րդ դարի վերջերին: 10-րդ դարի վերջերից Սյունիքի թագավորության մայրաքաղաքն էր: 1170 թ. Սյունիքի թագավորության անկումից հետո Կապանը վերածվել է գյուղի: 16-րդ դարի երկրորդ կեսից մինչև խորհրդային ժամանակաշրջանը հայտնի է եղել Ղափան անունով: 1997 թ. քաղաքին վերադարձվել է իր պատմական հնագույն անունը՝ Կապան (Տե՛ս «Կապան, նաև՝ Ղափան» (https://totalitaries.hazarashen.am/?p=6358): Կապանի տարածաշրջանի մասին տե՛ս https://www.visitkapan.am/about-kapan.html):

Հետաքրքրական է Դավիթ Բեկի անձնական կյանքին վերաբերող տեղեկությունները, որոնք նույնպես հակասական են: Ազգագրագետ Ե.Լալայանը անդրադարձ է կատարել «Ազգագրական հանդեսի» էջերում և նշել, որ Դավիթ Բեկը ամուսնացած չի եղել և սերունդ չի ունեցել (Լալայեան 1905, 178): Սակայն Ա. Աբրահամյանն իր աշխատության մեջ ներկայացրել է, որ Դավիթ Բեկը ունեցել է Մխիթար անունով որդի, ով հայտնի էր «Ղզրլխանչալ քեահեա» մականունով, որը նշանակում է «կարմիր դաշույն կրող առաջնորդ», հետագայում հոգևոր կոչում է ստացել և վերանվանվել Իսահակ (Աբրահամյան 1953, 93):

Հայոց հերոսական պամության մեջ Դավիթ Բեկը իր հայրենասիրությամբ և անմահ գործերով դարձել է Սյունիքի պատմության այն հերոսներից մեկը, ում կերպարը մեր սերունդների հիշողության մեջ թողել է անջնջելի հետք (Կնյազյան 1963, 3), իսկ ականավոր պատմաբան Լեոյի բնութագրմամբ. «Դավիթ Բեկը հայ ժողովրդի հիշողության մեջ մնացել է որպես պարսկական խաների և թուրքական նվաճողների դեմ ազատագրական շարժման առաջնորդ» (Լեո 2014, 67): Ա. Գուլամիրեանցը իր աշխատության մեջ Դավիթ Բեկի նկարագիրը տվել է հետևյալ կերպ. «Եւ ինքն Դաւիթ էր ազնուական, բարեպաշտ, արդարակորով, ծանօթ գրոց, արիասիրտ, երկայնամիտ խորհրդով, զօրաւոր բանիւք և գործովք, և վրէժխնդիր թշնամեաց ազգին մերոյ, ինքն և ամենայն հետևողք իւր» (Գուլամիրեանց 1871, 6):

Հայ ժողովրդի համար այդ բախտորոշ ժամանակաշրջանում Դավիթ Բեկի ունեցած դերը, ավանդը, նվիրումը Սյունիքի ազատագրական պայքարի հաղթանակին, նպաստեց նրան, որ դարեր անց ի պատիվ նրա կանգնեցվեց հուշարձան և իր անունով սկսեցին անվանակոչել մի շարք փողոցներ, թաղամասեր, գյուղեր և այլն:

Յուրաքանչյուր ժողովրդի պատմության մեջ լինում են ժամանակաշրջաններ, որոնք մեծ նշանակություն են ունենում: Հայ ժողովրդի պատմական ճակատագրում այդպիսի շրջաններից էր 1828 թ. Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին. «Դարերի խորքից եկող, բազում արհավիրքներ տեսած ու անլուր տանջանքներ ճաշակած, երիցս խաչված ու նորից վերակենդանացած ժողովուրդը երախտագիտությամբ ու ցնծությամբ է նշում Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման 150-ամյակը» («Հայաստանի աշխատավորուհի» 1978, 1), «Ոսկե աշուն է իջել հայկական նորոգ հողին, բերելով հազար գույներ, հազար խինդ» («Զանգեզուր» 1978, 1):

Գնահատելով և կարևորելով Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման 150-ամյակը, խորհրդահայ ղեկավարությունը ձեռնամուխ եղավ Դավիթ Բեկի գործունեությանը նվիրված հուշարձանի ստեղծմանը: Այն բացվեց 1978 թ. հոկտեմբերի 8-ին Ղափանում («Գրական թերթ» 1978, 3): Հուշարձանը ՀՍՍՀ ժողովրդական նկարիչ, քանդակագործ Սերգեյ Բաղդասարյանի և նրա օգնական, Ղափան քաղաքի գլխավոր նկարիչ Մարատ Նուրիջանյանի ստեղծագործական տաղանդի դրսևորումն է: Ստեղծագործական այս համարձակ մտահղացման արգասիքը հետևյալն է. «Ձին ոտքերով չի հենվում ոչ մի կետի: Այն միայն կողքով, թռիչքի պահին ասես հպվում է պատվանդանին, որը անառիկ բերդ-պարիսպ է, խորհրդանշում է հայրենիքը, ժողովրդին, որը միշտ կանգուն է, անսասան, իսկ

Դավիթ-Բեկը, ինչպես շատ քաջազուններ, անմահանում է... Ձիու քանդակում (երկարությունը՝ 12 մետր, քաշը՝ 7 տոննա, միայն պղինձը՝ 3,8 տոննա), ամբողջովին դրվագված պղինձ է, հեղինակներին հաջողվել է շեշտել ներքին լարումը, ուժն ու դինամիզմը, իմաստուն, քաջ տիրոջ հետ ձուլվելու կենդանական իմաստությունը» («Պղնձի համար» 1978, 3):

Տեղեկություն կա նաև Դավիթ Բեկի թրի հետ կապված: Քանդակագործ Ս.Բաղդասարյանի գրքում արձանի 1967 թ. էսքիզում թուրը վեր պարզած է, իսկ վերջնական տեսքում թուրը պատյանում է (Միրզախանյան Զանգեզուր TV, 2018): «Դավիթ-Բեկի հուշարձանը, որը մարտի ու խաղաղ տեսարաններ խորհրդանշող հարթաքանդակներով ծածկված պատ-համայնապատկերի հետ կազմում է մի ամբողջական հուշարձանախումբ, մեր քաղաքի հոգևոր թռիչքը մարմնավորող հոյակապ կոթող է, անցած դարերը ներկայի, հավերժության հետ կապող կենդանի մարմնացում» («Պղնձի համար» 1978, 3):

Դավիթ Բեկի հուշարձանի հետ կապված եղել են ասեկոսեներ, հատկապես կապված նրա՝ դեմքով դեպի հարավ-արևելք նայելուն: Ադրբեջանցիները դժգոհել են և ասել, որ նա ահաբեկիչ է, երբևէ չի սիրել թուրքերին, նրա դեմքը դնում եք դեպի Զանգեզան, որպեսզի հարձակվի: Ի պատասխան Ղափանի կուսշրջկոմի առաջին քարտուղար Ռ.Մինասյանը ասել է՝ ոչինչ, թո՛ղ վեր նայի (Միրզախանյան, Զանգեզուր TV 2018):

Մեր հավաքչական աշխատանքների ընթացքում հանդիպեցինք մի հետաքրքրիր տեղեկության՝ կապված Դավիթ Բեկի արձանի տեղադրման հետ: Հարցազրույց էր տվել արձանի եռակցող, Սյունիքի մարզի Վաչագան գյուղի բնակիչ՝ Մելսիկ Հարությունյանը (առավել հայտնի է Սվարչիկ Մեսո անունով): Նա պատմել էր, որ 1978 թ. քաղխորհուրդը որոշել է Դավիթ Բեկի արձանը տեղադրել Կապանում: Քանդակն արվել է Երևանում, ամբողջությամբ պղինձ էր, մեջը դատարկ, որը հետո կտոր առ կտոր պետք է տեղափոխվեր Կապան: Անհրաժեշտ եղավ փնտրել հմուտ եռակցողներ: Ղափանում շրջկոմի առաջին քարտուղարը՝ Ռաֆայել Մակիչը (Ռաֆայել Մինասյան), իրեն կանչել է և ասել, որ դու պիտի եռակցես քանդակը: Դրա համար 24 ժամ է տվել մտածելու: Ինքն էլ ասել է՝ ախր, Ռաֆայել Մակիչ, «իմ ձեռքին գրիչ չի, էլի, իմը գարելկա ա», բայց հետո համաձայնել է: Քանդակի կտորները եռակցվել են հենց այն տեղում, որտեղ պետք է տեղադրվեր արձանը: Մեկ ամսվա ընթացքում հասցրել է ամբողջությամբ անել գործը: Եռակցումից հետո արձանին ծծումբ են քսել, որպեսզի մոխրագույն մակերես ստանա: Արձանի եռակցման համար նա ստացել է 300 ռուբլի: Նա նաև պատմել է, որ Դավիթ Բեկի արձանի գլուխը Ս.Բաղդասարյանի դիմանկարով է արված: Պղնձագործը ծիծաղելով պատմեց, թե երբ հավաքել են արձանի կտորները, նկատել են, որ դեմքը նման է քանդակագործին. «Մի անգամ ասեցին Բաղդասարյան Սերգեյին, ինքն էլ ասեց՝ ո՞վ ա Դավիթ Բեկին տեսել, որ իմանա՝ դեմքը ոնց ա, բայց նման էր, ասում էինք՝Բաղդասարյան, բայց քեզ նման ա, ասում էր՝ հա, ինչ անենք, թող նման լինի... Փաստորեն, ինքն իրան ա տիրալ, բայց պարզ ասալ չի», — ասում է վարպետ Մեսոն (Մարտիրոսյան, Հետք 2014) :

Հուշարձանի բացումը շատ կարևոր իրադարձություն էր, որին ներկա են եղել Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի երկրորդ քարտուղար Պ. Անիսիմովը, Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Կ. Ղամբարյանը, Ղափանի կուսշրջկոմի առաջին քարտուղար Ռ. Մինասյանը, Գորիսի կուսշրջկոմի առաջին քարտուղար Ա. Հարությունյանը, Սիսիանի կուսշրջկոմի առաջին քարտուղար Կ. Հովհաննիսյանը, Մեղրու կուսշրջկոմի առաջին քարտուղար Յու. Առաքելյանը, Կուբաթլիի կուսշրջկոմի առաջին քարտուղար Մ. Ռուստամովան, Հայկական ԽՍՀ Կինեմատոգրաֆիայի պետական կոմիտեի նախագահ Գ. Հայրյանը, խորհրդահայ անվանի գրողներ Ս. Խանզադյանը, Ս. Այվազյանը, ՀԽՍՀ գունավոր մետալուրգիայի վարչության պետ Ֆ. Պետրոսյանը, ՀԽՍՀ լեռնատեխնիկական հսկողության պետական կոմիտեի նախագահ Գ. Գասպարյանը, ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նավթամթերքների մատակարարման գլխավոր վարչության պետ Բ. Հարությունյանը, «Սովետական գրող» հրատարակչության ավագ խմբագիր, գրող Ս. Ումառյանը, «Սովետական Հայաստան» թերթի խմբագրի տեղակալ Շ. Ավետիսյանը, Հայրենական մեծ պատերազմի վետերաններ և այլք: Հանդիսությունը բացել է ժողովրդական դեպուտատ Ղափանի քաղաքային սովետի գործկոմի նախագահ Ա. Գասպարյանը: Դեպի հուշարձան կոթողի համալիր տանող մուտքի կարմիր ժապավենը կտրել է ՀԿԿ Ղափանի շրջկոմի առաջին քարտուղար Ռ. Մինասյանը («Պղնձի համար» 1978, 1): Բազմահազար ներկաների բուռն ծափերով և բացականչություններով, երկինք բարձրացող գույնզգույն օդապարիկներով և ճախրող աղավնիներով տեղի է ունեցել բացումը, և սպիտակ պաստառի իջնելով երևացել է բազալտե բարձր պատվանդանի վրա դրված Դավիթ Բեկի պղնձաձույլ հուշարձան-կոթողը:

Բացմանը ելույթ են ունեցել մի շարք գործիչներ: Առաջինը ելույթ է ունեցել ՀԿԿ Ղափանի շրջկոմի առաջին քարտուղար Ռ. Մինասյանը, ով իր խոսքը սկսել է հետևյալ կերպ. հայ ժողովրդի մոտ տիրող ուրախ տրամադրությունը կապված է Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման 150-ամյակի առիթով: Մենք նշում ենք հայ և ռուս ժողովուրդների եղբայրության և բարեկամության համազգային տոնը: 1826–1828 թվականների Ռուս-պարսկական պատերազմում ռուսական կողմի հաղթանակը նպաստեց, որ կնքված Թուրքմենչայի պայմանագրով Արևելյան Հայաստանը դառնա Ռուսաստանի մաս: Պետք է հիշել, որ հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման սկիզբը դրվել է Իսրայել Օրու կողմից: Այդ շրջանից սկսած ռուսական զորքերի Կովկասի մատույցներում ցուցաբերած ռազմական գործողությունները նպաստեցին որպեսզի Արցախում և Սյունիքում սկսվեն ազատագրական շարժումներ: 1720-ական թվականներին Սյունիքում Դավիթ Բեկն էր, որ գլխավորեց ազատագրական պայքարը և ունեցավ բազում հաղթանակներ: Այդ իրադարձություններից հարյուր տարի անց՝ 1828 թ. հայ և ռուս ժողովուրդների միավորումով հաստատվեց ամուր բարեկամություն և դա իր դրսևորումը գտավ երկու ժողովուրդների բարեկամությունը խորհրդանշող մի շարք հուշարձան-կոթողների ստեղծումով: Ռ. Մինասյանը բոլորի անունից շնորհակալություն է հայտնել Դավիթ Բեկի արձանը կերտող հանրապետության ժողովրդական նկարիչ, քանդակագործ Ս. Բաղդասարյանին, Ղափան քաղաքի գլխավոր նկարիչ Մ. Նու-

րիջանյանին, արձանի մոնտաժման բարդ աշխատանքն իրականացրած՝ Երևանի գեղարվեստի ֆոնդի քանդակագործական կոմբինատի վարպետների տաղանդավոր մետաղագործ Ժորա Հակոբյանի ղեկավարած խմբին, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի, Քաջարանի հանքաշինական վարչության, լուսատեխնիկական, ավտոնորոգման «Էլեկտրոն» գործարանների, էլեկտրամոնտաժողների, քաղաքային էլեկտրոցանցի, №906 ճանշինվարչության, ավտոձեռնարկության, քաղաքի մոնտաժային կազմակերպությունների կոլեկտիվներին («Պղնձի համար» 1978, 1–2):

Ռ. Մինասյանի ելույթի խոսքերը ուսումնասիրելով՝ մեզ համար պարզ է դառնում մի կարևոր հանգամանք, որ իր խոսքի սկզբում նա առաջին հերթին անդրադարձ է կատարում ոչ թե Դավիթ Բեկի կերպարին, հայրենասիրությանը, նրա շնորհիվ Սյունիքի ազատագրմանը և դրանից բխող դարեր անց նրա հերոսական կերպարի հուշարձայնացմանը, այլ հայ-ռուսական հարաբերությունների կարևորությունը ներկայացնելուն, դրա առաջնահերթությունն ընդգծելուն: Եվ միայն դրանից հետո շնորհակալական խոսքեր է հնչեցնում հուշարձանը կերտողների պատվին:

Դավիթ Բեկի արձանի բացման առթիվ շնորհավորական ուղերձով հանդես են եկել նաև ՀԿԿ Կենտկոմի երկրորդ քարտուղար ընկեր[3] Պ. Անիսիմովը, ով ողջունել ու շնորհավորել ղափանցիներին Ռուսաստանի կազմի մեջ Արևելյան Հայաստանի միավորման 150-ամյակի և ազգային մեծ հերոս, զորավար Դավիթ Բեկի արձանի բացման առթիվ («Պղնձի համար» 1978, 2), ինչպես նաև՝ Զանգեզուրի Լենինի շքանշանակիր պղնձամոլիբդենային կոմբինատի խորփորման հաստոցավարների բրիգադավար, ԽՍՀՄ Գերագույն սովետի դեպուտատ Արկադիա Ոսկանյանը, Ադրբեջանական ԽՍՀ Կուբաթլուի կուսշրջկոմի առաջին քարտուղար Մախսուդա Ռուստամովան և սովետահայ ականավոր գրող Սերո Խանզադյանը, Ղափանի լեռնամետալուրգիական տեխնիկումի ուսանողուհի Անահիտ Սաֆարյանը: Ելույթ է ունեցել նաև Քաջարանի ռուսական միջնակարգ դպրոցի դիրեկտոր Վալենտինա Սլյոտը: Նա ասել է.«Հայկական հողում մեծ տոն է՝ ռուս և հայ ժողովուրդների, մեր անծայրածիր հայրենիքի բոլոր ժողովուրդների բարեկամության և եղբայրության մեծ տոն: Մեր բարեկամության սկիզբը վաղուց է դրվել: Այն փորձություններով է անցել, կրակով ու արյամբ թրծվել, մեր միությունը սիրով ու փառքով է ամրացել: Թույլ տվեք շրջանի ժողկրթության աշխատողների և մտավորականության անունից շնորհավորել բոլորիդ՝ այս փառապանծ հոբելյանի և ազգային ազատագրական շարժման ականավոր գործիչ Դավիթ Բեկի հուշարձանի բացման առթիվ և հավաստիացնել, որ մենք չենք խնայի ուժ ու եռանդ՝ աճող սերնդին դաստիարակելու եղբայրական բարեկամության ու պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով» («Պղնձի համար» 1978, 3):

Նույն տրամաբանությամբ մենք դարձյալ նկատում ենք, որ Դավիթ Բեկի հուշարձանի բացման օրը բոլոր նրանք ովքեր ելույթ են ունեցել, կարևորել են Արևել-

[3] ԽՍՀՄ-ում՝ քաղաքացիների միմյանց դիմելու հարգական բառ (Տես Աղայան 1976, 405):

յան Հայաստանի Ռուսաստանին միավորվելու 150-ամյակը, և որ ապագա սերունդները նույնպես պետք է լցվեն ռուս ժողովրդի հանդեպ բարեկամական ջերմ զգացումով:

Այնուհետև ելույթ է ունեցել շրջանի՝ մեծ զորավարի անունը կրող գյուղի Դավիթբեկի կոլտնտեսության կուսկազմակերպության քարտուղար Գր. Ավագյանը. «Թույլ տվեք շրջանի գյուղատնտեսության և հայ ժողովրդի արժանավոր զավակ Դավիթ-Բեկի անունը կրող գյուղի կոլտնտեսության աշխատավորների անունից շնորհավորել բոլորիդ՝ Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման 150-ամյակի և Ղափան քաղաքում Դավիթ-Բեկի հուշարձանի բացման առթիվ և շնորհակալություն հայտնել այն բոլոր կազմակերպություններին և անձանց, ովքեր օգնել են իրականացնելու զանգեզուրցիներիս վաղեմի ցանկությունը: Մենք միայն պատմությունից գիտենք այն ծանր օրերի մասին, երբ հայ գյուղացին ստիպված էր արորի հետ դաշտ տանել իր զենքը՝ ինքնապաշտպանության համար: Վաղուց են անցել այդ օրերը: Ռուս մեծ ժողովրդի, հարազատ կոմունիստական կուսակցության հոգատարության, եղբայրական մյուս ժողովուրդների օգնության շնորհիվ, հիմնովին փոխվել է նաև գյուղացու կյանքը, դարձել ունևոր ու երջանիկ» («Պղնձի համար» 1978, 3):

Գր. Ավագյանի ելույթում նույնպես Դավիթ Բեկի գործունեության և կատարած սխրանքի մասին ոչինչ չենք տեսնում, այլ առաջին հերթին կարևորվում է կոմունիստական կուսակցության դերակատարումը հայ ժողովրդի, մասնավորապես հայ գյուղացու կյանքի բարելավման գործում: Նմանատիպ մտածողությունը և վերաբերմունքը տվյալ ժամանակաշրջանում կոմունիստական կուսակցության մենատիրության պայմաններում նորմալ երևույթ էր: Այս ամենից կարելի է ենթադրել, որ կոմունիստական վարչակարգի հաստատումից և նրա կազմի մեջ մտնելուց հետո, հայ իրականության մեջ շատ կարևոր է եղել ռուսական ազդեցությունը, և նույնիսկ Դավիթ Բեկի հուշարձանի բացումը հայ-ռուսական հարաբերությունների 150-ամյակի տոնակատարության օրերին, առանձին չի ներկայացվել, այլ տեղ է գտել այդ իրադարձության ամբողջության մեջ:

Ելույթների ավարտից հետո սկսվել է գրական-գեղարվեստական, սպորտային մասը, որը վարել են հաղորդավարներ՝ Գագիկ Դավթյանը և Սուսաննա Մարտիրոսյանը: Քաղաքում լսվել են երաժշտական ուսումնարանի, երաժշտական ու հանրակրթական դպրոցների համահավաք երգչախմբի կատարմամբ՝ «Ազգ փառապանծ» (խմբավար՝ Վ. Գասպարյան) երգի մեղեդիները: Բեմի վերածված քաղաքային կամրջի հարթակում բեմադրվել է (ձևավորումը՝ Գ. Խաչատրյանի) դավիթբեկցիների ռազմական պարը: Այնուհետև ելույթ են ունեցել մանկական մարզադպրոցի սաները, ցատկացանցի վրա ելույթ են ունեցել նույն դպրոցի մարզիկները («Պղնձի համար» 1978, 3):

Այն, որ Դավիթ Բեկի հուշարձանը կանգնեցվեց Սյունիքում 1978 թ.՝ ի նշանավորումն հայ-ռուսական հարաբերությունների 150-ամյակի առթիվ, ամենևին էլ պատահական չէր: Քանզի Ռուսաստանի կայսր Պյոտր 1-ինի սկսած կասպիական արշավանքը հայ ժողովրդի մոտ ոգևորություն էր առաջացրել, ինչն էլ հանգեցրել էր ազատագրական պայքարի ծավալմանը թուրքական և պարսկական բռնապե-

տությունների դեմ՝ Արցախում և Սյունիքում: Դավիթ Բեկի գլխավորած այդ ազատագրական շարժումը, որի պատմական նշանակությունը դարձավ ռուսական կողմի հետ հայ ժողովրդի ռազմաքաղաքական դաշինքի մեջ մտնելը և հետագայում ռուսական կողմնորոշման ամրապնդումը: Դավիթ Բեկի ունեցած հաջողություններից հարյուր տարի հետո, հայ և ռուս ժողովուրդները միավորվեցին: Քանդակը հաղիսանում է Դավիթ Բեկի՝ որպես պատմական կերպարի հուշարձայնացման կարևոր օրինակներից: Այն ևս մեկ անգամ սերունդներին հիշեցնում է նրա քաջագործությունների, սխրանքների և պայքարի անհրաժեշտության և կարևորության մասին:

Դավիթ Բեկի կերպարի հուշարձայնացման մեկ այլ օրինակ է Կապան քաղաքի թաղամասերից մեկի Դավիթ Բեկի անունով անվանակոչելու որոշումը: Ըստ Հայկական ԽՍՀ ժողովրդական դեպուտատների Ղափանի շրջանային սովետի գործադիր կոմիտեի 1986 թ. օգոստոսի 12-ի թիվ 13 արձանագրության՝ Սպանդարյան փողոցի փոփոխական հարկերով բնակելի թաղամասը անվանակոչել Դավիթբեկի թաղամաս (Սյունիքի մարզային արխիվ, արձ. թիվ 13):

Ինչ վերաբերում է Կապանի շրջանի Դավիթ Բեկ գյուղին, ապա նախկինում կրել է Ջեյվա անունը, հետո վերանվանվել 1949 թ. հունիսի 29-ին (Հայկական ուսումնասիրությունների Անի կենտրոն 2021): Ըստ Սյունիքի մարզպետարանի պաշտոնական կայքում եղած տեղեկատվության Դավիթ Բեկ գյուղը հիմնվել է 18-րդ դ. Դավիթ Բեկի ցուցումով՝ Ղարաբաղից տեղափոխված մի քանի ընտանիքների կողմից ուր 19-րդ դարում տեղափոխվել են նաև Տախ, Եսկիճա, Փակահան, Ակն, Խաթուն, Բաղ գյուղերի բնակիչները: Գյուղում ապաստան են գտել 1915 թ. Վասպուրականից ներգաղթած մի քանի ընտանիքներ: 1919–1921թթ. Գարեգին Նժդեհի գլխավորությամբ Դավիթ Բեկ գյուղը ակտիվ պայքար է մղել թուրքական զորքերի դեմ (Սյունիքի մարզպետարան, Կապան համայնքի բնակավայրերը):

Երևան քաղաքում փողոցներից մեկը նույնպես հատուկ որոշումով ստացել է Դավիթ Բեկի անունը: Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 1991 թ. օգոստոսի 21-ի թիվ 15/62 որոշումով «նախկին Մովսես Խորենացու փողոցը՝ ի պատիվ ԺԸ դարի հայ ազատագրական պատերազմի նշանավոր առաջնորդի՝ Դավիթ Բեկի փողոց» անվանակոչվեց (Քաղաքապետարանի արխիվ, որոշում 15/62):

Մենք առաջնային տեղ հատկացրել ենք հատկապես Դավիթ Բեկի քանդակի ստեղծման պատմությունը ներկայացնելուն և նոր միայն թվարկել ենք հուշարձայնացման այլ օրինակները: Մեր ձեռքի տակ եղած արձանագրությունները միայն տվյալներ են տալիս անվանակոչության որոշումները ընդունելու մասին և մանրամասն չի ներկայացված տվյալ որոշման հանգելու պատճառները:

Այսպիսով, ամփոփելով աշխատանքը, կարող ենք ասել, որ ի տարբերություն 17-րդ դարի 2-րդ կեսի և 18-րդ դարի ազատագրական պայքարի կազմակերպիչ մյուս գործիչների՝ Իսրայել Օրու և Հովսեփ Էմինի, ովքեր հայ ժողովրդի ազատության հասնելու հույսը կապում էին որևէ հզոր տերության աջակցության հետ, Դավիթ Բեկը ապացուցեց հակառակը, որ կարելի է սեփական ուժով հասնել հաղթանակի և ձեռք բերել անկախություն: Նրա շնորհիվ բարձրացավ հայ ժողովրդի ինք-

նագիտակցությունը և վստահությունը իր սեփական ուժերի հանդեպ: Իր հերթին հայ ժողովուրդն էլ հետագայում նրա կերպարը անմահացրեց՝ նրա պատվին հուշարձան կառուցելով, փողոցներ, թաղամասեր ու գյուղեր անվանակոչելով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արխիվային փաստաթղթեր

Քաղաքապետարանի արխիվ, որոշում 15/62 – Երևանի քաղաքապետարանի արխիվ, որոշում 15/62, 21.08. 1991:

Սյունիքի մարզային արխիվ, արձ. Թիվ 13 – Սյունիքի մարզային արխիվ, արձանագրություն՝ 12. 08. 1986, թիվ 13:

Պարբերական մամուլ

Գրական թերթ 1978 – «Գրական թերթ», Երևան, 1978, № 41:

Զանգեզուր 1978 – «Զանգեզուր» թերթ, Գորիս, 1978, № 129:

Հայաստանի աշխատավորուհի 1978 – «Հայաստանի աշխատավորուհի» թերթ, Երևան, 1978, № 10:

Պղնձի համար 1978 – «Պղնձի համար» թերթ, Ղափան, 1978, № 122:

Գրականություն

Աբրահամյան 1953 – Աբրահամյան., Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1953:

Աղայան 1976 – Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Հատոր 1, Երևան, 1976:

Գուլամիրեանց 1871 – Գուլամիրեանց Ա., Ընտիր պատմութիւն Դաւիթ Բէգին, և պատերազմաց հայոցն Խափանու որք եղեն ընդդէմ թուրքաց ի մերում ժամանակի, այն է յամի տեառն 1722, և հայոց 1171, Վաղարշապատ, 1871:

Լալայան 1905 – Լալայեան Ե., Կապան կամ Ղափան. Մելիքութիւններ, «Ազգագրական հանդէս», XII գիրք 1904, Թիֆլիս, 1905:

Լեո 2014 – Լեո, Հայ զինվորությունը Ղափանում: Դավիթ Բեկ, Երևան, 2014:

Կնյազյան 1963 – Կնյազյան Հ., Ազատագրական պայքարը Դավիթ Բեկի գլխավորությամբ, Երևան, 1963:

Հովհաննիսյան 1970 – Հովհաննիսյան Ա., Դավիթ Բեկի գլխավորած Ղափանի ապստամբությունը, «Բանբեր Երևանի համալսարանի», № 1(10), Երևան, 1970, 96 – 111:

Միրզոյան 1950 – Միրզոյան Ա., Հայ ազատագրական շարժումները Սյունիքում (1722 – 1730 թթ.), Երևան, 1950:

Զամչյանց 1984 – Զամչյանց Մ., Հայոց պատմություն, հատոր Գ, Երևան, 1984:

Օրբելյան 1971 – Օրբելյան Ս., Դավիթ Բեկի ծագումնաբանության հարցի շուրջը, «Բանբեր Հայաստանի արխիվների», № 1 (28), Երևան, 1971, 173 – 184:

Էլեկտրոնային աղբյուրներ

Կապան, նաև՝ Ղափան – «Կապան, նաև՝ Ղափան»՝ ArmeniaTotal(itar)is. (https://totalitaries.hazarashen.am/?p=6358):

Կապանի տարածաշրջան – Կապանի տարածաշրջանի մասին՝ Visitkapan.am. (https://www.visitkapan.am/about-kapan.html):

Հայկական ուսումնասիրությունների Անի կենտրոն 2021 – Հայկական ուսումնասիրությունների Անի կենտրոն, Դավիթ Բեկ գյուղի բնակչությունը 1831 – 1931թթ. և խորհրդային տարիներին. Կապանի շրջան. 20.02.2021:

(http://www.aniarc.am/2021/02/20/davit-bek-1831-1931-population-korkotian/)

Մարտիրոսյան 2014–Մարտիրոսյան Մ., Սվարչիկ Մեսոն՝ «Դավիթ Բեկին» եռակցողը, Հետք, 29.10.2014: (https://hetq.am/hy/article/57098)

Միրզախանյան 2018–Միրզախանյան Ն., Ինչու է Դավիթ-Բեկը արշավում դեպի սեփական ամրոցը, Զանգեզուր TV, 14.02.2018: (https://www.youtube.com/watch?v=GUY5MnuWTeE)

Սյունիքի մարզպետարան–Սյունիքի մարզպետարան, Կապան համայնքի բնակավայրերը, Դավիթ բեկ, էջ 1: (http://syunik.mtad.am/u_files/file/syunik/davit_bek.pdf)

Armine Shahbazyan

Memorial Complex of Sardarapat Battle,
National Museum of Armenian Ethnography and History of Liberation Struggle

shahbazyan9494@gmail.com

MONUMENTALISATION OF A HISTORICAL FIGURE–"DAVID BEK"

Key words: David Bek, Kapan, monument, naming, decision, inscription, Yerevan Municipality.

The aim of this article is to present the ways of monumentalisation of the historical figure of David Bek in the Armenian environment. The article aims to present in detail the examples of monuments, from which we have singled out the monument dedicated to David Bek in Kapan, the renaming of the village of Davit Bek and the district of Davit Bek in Kapan, as well as the renaming of the former Movses Khorenatsi Street in Yerevan. The monumentalisation of the character of David Bek is still keeping alive his feats in the memory of generations.

Армине Шахбазян

Мемориальный комплекс Сардарапатской битвы,
национальный музей этнографии армян и истории освободительной борьбы

shahbazyan9494@gmail.com

МОНУМЕНТАЛИЗАЦИЯ ИСТОРИЧЕСКОГО ОБРАЗА «ДАВИТ БЕК»

Ключевые слова: Давит Бек, Капан, памятник, именование, решение, надпись, мэрия Еревана.

Цель данной статьи-представить проявления монументализации образа Давита Бека в армянской среде. В статье ставится задача подробно рассмотреть примеры монументализации памятников. Мы выделили памятник Давиту Беку, находящийся в Капане, название квартала Давит Бек города Капана и села Давит Бек, а также переименование улицы Мовсеса Хоренаци в городе Ереван на Давит Бек. Монументализация образа Давита Бека продолжает сохранять в памяти поколений совершенные им подвиги.